ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N_____

Հասցեն. գ.Նորաշեն՝ փ-4, փկղ-3, շենք-12

Հեռ.093222994

ՈՐՈՇՈՒՄ

12. ապրիլի 2019թ. N 17

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 19.01.2019Թ. ԹՎ 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

/ԶԵԿ. Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով՝ «Իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին » ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի պահանջներին, և համաձայն՝ հարցի վերբերյալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված զեկույցն առ այն, որ 2017 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգայի ժողովի կողմից ընդունվել է մի շարք օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որոնց համաձայն նախատեսվում է համայնքներում սահմանել համայնքն սպասարկող անասնաբույժի հաստիք, որը բացի <Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում > պետական ծրագրով նախատեսված՝ 9-ը կանխարգելիչ և 3 ախտորոշիչ միջոցառումներից, համայնքում պետք է մատուցի վճարովի անասնաբուժական ծառայություններ, որոնց դիմաց գանձված գումարները պետք է մուտքագրվեն համայնքի բյուջե և ուղղվեն անասնաբույժի հաստիքի պահպանման ծախսերին: Զեկուցողը նշեց, որ համապատասխան մասնագետի առկայության դեպքում համայնքապետարանը ձեռք կբերի նախնական պայմանավորվածություն և փոխադարձ համաձայնության դեպքում մասնագետի հետ կկնքվի աշխատանքային պայմանագիր: Հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունները՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Նորաշեն համայնքի 2019թ.-ի համար <Տեղական տուրքեր և վճարներ> սահմանելու մասին՝ համայնքի ավագանու 19.01.2019թ. թիվ 2 որոշման մեջ կատարել լրացումներ, և որոշման 6-րդ կետից հետո սահմանել 7-րդ կետը՝ համայնքն սպասարկող անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների ցանկը և գնացուցակը.

7.1 Կենդանիների հիվանդութ. բուժման , կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ 1000 դրամ

7.2 Ծննդօգնություն

ա/ թեթև միջամտություն՝ 2000 դրամ

բ/ ծանր միջամտություն՝ 10000 դրամ

7.3Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում (բացառությամբ՝ <Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)

ա/ մանր կենդանիներից՝ 200 դրամ

բ/ խոշոր կենդանիներից՝ 500 դրամ

7.4 Կենդանիների արտաքին և ներքի մակաբույծերի դեմ պայքար՝ 500 դրամ

7.5Ախտահանություն՝ 1քառ. մետրը 300 դրամ

7.6Միջատազերծում(դեզիսեկցիա) 1 քառ.մետրը 200 դրամ

7.7Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) 1 քառ.մետրը 200 դրամ

7.8Արհեստական սերմնավորում՝ 7200 դրամ

7.9 Կենդանու հերձում

ա/ մանր՝ 1000 դրամ

բ/ խոշոր՝ 3000 դրամ

7.10 Կենդանու բուժում ՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից , յուրաքանչյուր այցելության համար.

ա/ մանր՝ 1000 դրամ

բ/ խոշոր՝ 2000 դրամ

7.11Կենդանիների նախասպանդային զննում ՝ կախված կենդանու տեսակից

ա/ մանր՝ 1000 դրամ

բ/ խոշոր՝ 2000 դրամ

հարցը քվեարկվեց՝

Կողմ- 4, դեմ-0, ձեռնպահ-0

Համայնքի ավագանու անդամներ.

Կողմ ՝ ..... Պ.Ավագյան

կողմ՝ ..... Խ.Հակոբյան

Կողմ՝ ..... Ռ.Սահակյան

Կողմ՝ ..... Ա.Սարիբեկյան

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ